

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ
2020թ. համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10



«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
 Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
 Վ.Սարգսյանի փ. 26/1
 «Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
 Հեռախոս + 374 (10) 595 999
 Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Էթիկայի պահանջների, և կատարել ենք Էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԻ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խնդարություններից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձից պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են Եական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի Եական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են Եական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների Եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով Եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք դեկլարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է Եական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Եական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարա չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:



Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝


Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC

«ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ
28 հունիսի 2021թ.

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
առ 31 դեկտեմբերի 2020թ.**

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	28,641,069	26,342,368
Ոչ նյութական ակտիվներ		10,986	12,334
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		316,734	-
Հետաձգված հարկային ակտիվներ	10	-	633,376
Ոչ ընթացիկ ակտիվներ		28,968,789	26,988,078
Պաշարներ	12	463,199	393,850
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	13	807,303	668,538
Բանկային ավանդներ	14	151,660	334,050
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	15	314,429	167,505
Ընթացիկ ակտիվներ		1,736,591	1,563,943
Ընդամենը ակտիվներ		30,705,380	28,552,021
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	16	585,650	585,650
Լրացուցիչ կապիտալ	16	61,188	-
Վերազնահատու միջ արժեքի ան	16	22,428,761	20,198,725
Կուտակված վնաս		(19,658,051)	(16,153,624)
Ընդամենը սեփական կապիտալ		3,417,548	4,630,751
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	17	2,017,786	18,066,018
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	137,652	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ		2,155,438	18,066,018
Վարկեր և փոխառություններ	17	23,096,167	4,166,373
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	18	2,035,723	1,374,533
Ընթացիկ հարկային պարտավորություն		504	314,346
Ընթացիկ պարտավորություններ		25,132,394	5,855,252
Ընդամենը պարտավորություններ		27,287,832	23,921,270
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		30,705,380	28,552,021

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2020թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Հասույթ	5	6,283,329	6,721,616
Վանառքի ինքնարժեք	6	(2,641,883)	(3,308,842)
Համախառն շահույթ		3,641,446	3,412,774
Այլ եկամուտ		101,610	8,378
Վարչական ծախսեր	7	(1,009,059)	(912,551)
Այլ ծախսեր	8	(352,912)	(167,969)
Առևտրական և այլ դերիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ		(85)	(15,831)
Գործառնական գործունեության արդյունքներ		2,381,000	2,324,801
Ֆինանսական եկամուտ	9	30,412	276,319
Ֆինանսական ծախսեր	9	(5,485,969)	(1,656,805)
(Վնաս)/շահույթ նախքան շահութահարկով հարկումը		(3,074,557)	944,315
Շահութահարկի գծով ծախս	10	(429,870)	(784,378)
(Վնաս)/շահույթ տարվա համար		(3,504,427)	159,937
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
<i>Հողվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս</i>			
Հիմնական միջոցների վերագնահատում	11	2,719,556	-
Հարակից շահութահարկ	10	(489,520)	-
Հարկի դրույքաչափի նվազեցում	10	-	492,652
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		2,230,036	492,652
Ընդամենը համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար		(1,274,391)	652,589

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 28-ին և ստորագրվել են վերջինիս անունից:



Արտաշես Կիրակոսյան
Գլխավոր տնօրեն

Համլետ Սահակյան
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2020թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Հիմնական միջոցների վերագնահա- տումից աճ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	585,650	-	19,706,073	(16,313,561)	3,978,162
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար					
Շահույթ տարվա համար	-	-	-	159,937	159,937
Հարկի դրույքաչափի նվազեցման հետևանք (Ծնթց. 11)	-	-	492,652	-	492,652
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	585,650	-	20,198,725	(16,153,624)	4,630,751
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	585,650		20,198,725	(16,153,624)	4,630,751
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար					
Վնաս տարվա համար	-	-	-	(3,504,427)	(3,504,427)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	2,230,036	-	2,230,036
Ընդամենը համապարփակ (վնաս)/եկամուտ	-	-	2,230,036	(3,504,427)	(1,274,391)
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ					
Ներդրումներ և բաշխումներ					
Այլ ներդրումներ և բաշխումներ	-	61,188	-	-	61,188
Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ	-	61,188	-	-	61,188
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	585,650	61,188	22,428,761	(19,658,051)	3,417,548

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 2020թ. համար

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
(Վնաս)/շահույթ տարվա համար	(3,504,427)	159,937
<i>Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,260,821	1,706,625
Հիմնական միջոցների վերագնահատում	223,268	-
Այլ ոչ դրամային եկամուտներ	(49,542)	1,954
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ	83	15,831
Պահուստների փոփոխություն	-	111,949
Չուտ ֆինանսական ծախսեր	5,426,647	1,379,148
Շահույթահարկի գծով ծախս/(օգուտ)	429,870	784,378
<i>Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.</i>		
Պաշարներ	(18,460)	(4,439)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(138,719)	9,713
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	541,689	(931,471)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	4,171,230	3,233,625
Վճարված շահութահարկ	(475,630)	(265,716)
Վճարված տոկոսներ	(1,284,354)	(1,377,330)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	2,411,246	1,590,579
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,063,234)	(245,668)
Կանխավճարներ հիմնական միջոցների համար	(316,734)	-
Մուտքեր բանկային ավանդներից	3,031,270	809,106
Ավանդների տեղաբաշխում բանկերում	(2,820,000)	(740,271)
Ստացված տոկոսներ	30,280	20,819
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	(1,138,418)	(156,014)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր փոխառություններից	20,578,669	879,426
Փոխառությունների մարում	(21,927,271)	(2,215,969)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	(1,348,602)	(1,336,543)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/ան	(75,774)	98,022
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	167,505	70,349
Արտարժույթի փոխարժեքի տատանումների հետևանքները դրամական միջոցների և դրանց համարժեքների համար	222,698	(866)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	314,429	167,505

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն («Ընկերություն») Հայաստանի Հանրապետությունում գրանցված փակ բաժնետիրական ընկերություն է:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0021, Աղոնցի փ. 10բ: Ընկերության վարչակառավարչական ստորաբաժանումները գտնվում են Երևանում, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

Ընկերության հիմնական գործունեությունն էլեկտրաէներգիայի արտադրությունն է Հայաստանի Հանրապետությունում գտնվող յոթ հիդրոէլեկտրակայաններից բաղկացած Սևան-Հրազդան կասկադում (Կասկադ)՝ մինչև 2032թ. գործող թիվ 0108 լիցենզիայի համաձայն: Կասկադի կողմից արտադրվող էլեկտրաէներգիան վաճառվում է Հայաստանի Հանրապետությունում: Էլեկտրաէներգիայի վաճառքի սակագները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի («ՀԾԿՀ») կողմից:

2020թ. մարտի 10-ին «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ-ն ավարտեց Ընկերության ձեռքբերման գործարքը և հսկողություն ձեռք բերեց Ընկերության նկատմամբ՝ գնելով ընկերության բաժնետոմսերի 90% - ը և քվեարկող բաժնետոմսերի 10% - ը «Հիդրոինվեստ» ԲԲԸ-ից և բաժնետոմսերի 10%-ը Միխայիլ Մանտրովից:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ամբողջությամբ պատկանում է «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ին: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն Է, իսկ վերջնական վերահսկող անձն է պրն. Սամվել Կարապետյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղում 2020թ. սեպտեմբերին վերսկսված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, և COVID-19 համավարակն էլ ավելի են մեծացրել գործարար միջավայրում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Ղեկավարության գնահատմամբ COVID-19 նշանակալի ազդեցություն չի ունեցել Ընկերության գործունեության վրա:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության հավաստում

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 11-ի (ա) կետում՝ հիմնական միջոցների վերագնահատում:

Բանկային վարկի մարման ժամանակացույցի հետ կապված կատարված ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված են Ծանոթագրություն 17-ում և Ծանոթագրություն 19 (ա) (iii):

Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահատումներ պահանջում են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտվող):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված երակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումներն Ընկերությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 19-ում «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

5. Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

Ընկերությունը հասույթը հիմնականում ստանում է էլեկտրաէներգիայի վաճառքից: Հասույթի այլ աղբյուրները ներառում են մատուցված էլեկտրաէներգիայի փոխանցման ծառայությունները և արտադրանքի վաճառքը:

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	6,162,486	6,593,839
Այլ հասույթ		
Էլեկտրաէներգիայի փոխանցման ծառայություններ	120,843	109,023
Արտադրանքի վաճառք	-	18,754
Ընդամենը հասույթ	6,283,329	6,721,616

(բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ ծառայությունների հիմնական տեսակների և հասույթի ճանաչման ժամկետների:

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ծառայությունների հիմնական տեսակներ		
Արտադրված էլեկտրաէներգիա	1,622,088	1,844,657
Հասանելի հզորություն	4,540,398	4,749,182
Էլեկտրաէներգիայի փոխանցման ծառայություն	120,843	109,023
Արտադրանքի վաճառք	-	18,754
	6,283,329	6,721,616

Հասույթի ճանաչման ժամկետներ

Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	6,283,329	6,702,862
Ժամանակի որոշակի պահին փոխանցված արտադրանք	-	18,754
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	6,283,329	6,721,616

(գ) Կատարման պարտականություններ և հատույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հատույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Արտադրանքի/ ծառայության տեսակը	Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման հիմնական պայմանները	Հասույթի ճանաչման քաղաքականություն
Էլեկտրաէներգիայի վաճառք	Էլեկտրաէներգիայի վաճառքի պայմանագրերից ստացվող հասույթը ճանաչվում է հաճախորդին էլեկտրաէներգիան մատակարարելուց հետո: Մատակարարված էլեկտրաէներգիայի հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հաճախորդները միաժամանակ ստանում և սպառում են էլեկտրաէներգիայի մատակարարման օգուտները՝ վերջինիս մատակարարմանը զուգընթաց, և Ընկերությունը ծառայության նկատմամբ հսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում, այդ իսկ պատճառով, իր կատարման պարտականությունները կատարում է և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում: Փոփոխական արժեքը, որն իրենից ներկայացնում է սպառված էլեկտրաէներգիայի քանակության և գործող սակագների արտադրյալը, որոշվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում վերցված հաշվիչների ցուցմունքների հիման վրա:
Արտադրական հզորության վաճառք	Այս պայմանագրերի շրջանակում Ընկերությունն ունի հաճախորդին անհրաժեշտության դեպքում էլեկտրաէներգիա մատակարարելու հանձն առնված պարտականություն: Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցմանը զուգահեռ: Հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցմանը զուգընթաց՝ հիմք ընդունելով անցած ժամանակահատվածը:
Էլեկտրաէներգիայի փոխանցման ծառայություն	Այս պայմանագրի համաձայն Ընկերությունը փոխանցում է էլեկտրաէներգիան իր միակ հաճախորդի սպառողական և/կամ իր հաճախորդի այլ ցանցային կայաններին: Հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հաճախորդները միաժամանակ ստանում և սպառում են էլեկտրաէներգիայի մատակարարման օգուտները՝ վերջինիս մատակարարմանը զուգընթաց, և Ընկերությունը ծառայության նկատմամբ հսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում, այդ իսկ պատճառով, իր կատարման պարտականությունները կատարում է և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում: Փոփոխական արժեքը, որն իրենից ներկայացնում է սպառված էլեկտրաէներգիայի քանակության և գործող սակագների արտադրյալը, որոշվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում վերցված հաշվիչների ցուցմունքների հիման վրա:

6. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Մաշվածություն և ամորտիզացիա	1,247,188	1,598,635
Աշխատավարձ	818,132	867,153
Էլեկտրաէներգիա	243,045	256,331
Նյութեր	98,843	286,919
Ծառայություններ	225,556	195,352
Վարձակալություն	6,046	99,678
Այլ	3,073	4,774
	2,641,883	3,308,842

7. Վարչական ծախսեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Աշխատավարձ	418,668	333,389
Բանկային և ապահովագրություն ծառայությունների վճարներ	227,690	133,505
Անվտանգության ծառայություն	172,320	170,980
Մասնագիտական ծառայություններ	56,522	36,128
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	38,261	22,661
Գրասենյակային ծախսեր և կոմունալ ծառայություններ	22,290	22,029
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	19,615	8,270
Մաշվածություն և ամորտիզացիա	13,877	106,807
Գործուղման և ներկայացուցչական	6,958	34,748
Կապի ծառայություն	5,156	8,687
Այլ	27,702	35,347
	1,009,059	912,551

8. Այլ ծախսեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Վերազնահատումից կորուստ	223,289	-
Սոցիալական ծախսումներ	78,896	84,975
Տույժեր և տուգանքներ	34,491	77,158
Այլ ծախսեր	16,236	5,836
	352,912	167,969

9. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ.		
Ժամկետային ավանդների գծով	30,412	20,819
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից առաջացող ընդամենը տոկոսային եկամուտ	30,412	20,819
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	-	255,500
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ – տոկոսային ծախս	(1,446,078)	(1,656,805)
Չուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից	(4,039,891)	-
Ֆինանսական ծախսեր	(5,485,969)	(1,656,805)
Շահույթում կամ վնասում ճանաչված գուտ ֆինանսական ծախսեր	(5,455,557)	(1,380,486)

10. Շահութահարկի գծով ծախս

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Ընկերությունը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառելի 18% դրույքաչափով (2019թ-ին՝ 20%):

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	(161,793)	(429,143)
Հարկի ավել հաշվարկված գումար նախորդ տարիներում	-	11,071
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(268,077)	(366,306)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	(429,870)	(784,378)

(բ) Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված գումարներ

հազ. դրամ	2020թ.			2019թ.		
	Նախքան հարկումը	Հարկ	Առանց հարկի	Նախքան հարկումը	Հարկ	Առանց հարկի
Հիմնական միջոցների վերազնահատում	22,918,281	(489,520)	22,428,761	19,706,073	492,652	20,198,725

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

	2020թ.		2019թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը	(3,074,403)		944,315	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	(553,393)	18	188,877	20.0
Հարկի ավել հաշվարկված գումար նախորդ տարիներում	-	-	(11,071)	(1.1)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը ժամանակավոր տարբերությունների վրա	141,995	(4.6)		
Հարկի դրույքաչափի նվազեցում*	-	-	568,071	60.0
Զնվազեցվող ծախսեր	841,268	(27.4)	38,501	(4.1)
	429,870	(10.8)	784,378	74.8

* Ծանաչված գումարն իրենից ներկայացնում է 2020թ. հունվարի 1-ից գործող ՀՀ օրենսդրության փոփոխությունների համաձայն շահութահարկի 20% դրույքաչափը 18%-ի նվազեցնելու հետևանքը:

** Ընդհանուր չնվազեցվող ծախսերից 710,180 հազար ՀՀ դրամը փոխարժեքային տարբերություններից գուտ կորուստների արդյունք է:

(գ) Ծանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Հիմնական միջոցներ	531,002	1,122,000	-	-	531,002	1,122,000
Ոչ նյութական ակտիվներ	280	297	-	-	280	297
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	4,707	(2,132)	-	(2,132)	4,707
Վարկեր և փոխառություններ	-	-	(884,784)	(694,504)	(884,784)	(694,504)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	217,982	200,876	-	-	217,982	200,876
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	749,264	1,327,880	(886,916)	(694,504)	(137,652)	633,376

(դ) Ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները տարվա ընթացքում

հազ. դրամ	1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2020թ.
Հիմնական միջոցներ	1,122,000	(101,478)	(489,520)	531,002
Ոչ նյութական ակտիվներ	297	(17)	-	280
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	4,707	(6,839)	-	(2,132)
Վարկեր և փոխառություններ	(694,504)	(176,849)	(13,431)	(884,784)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	200,876	17,106	-	217,982
	633,376	(268,077)	(502,951)	(137,652)

հազ. դրամ	1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2019թ.
Հիմնական միջոցներ	1,331,493	(702,145)	492,652	1,122,000
Ոչ նյութական ակտիվներ	152	145	-	297
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	2,073	2,634	-	4,707
Վարկեր և փոխառություններ	(839,454)	144,950	-	(694,504)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	12,766	188,110	-	200,876
	507,030	(366,306)	492,652	633,376

11. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հոդա- տարածք և շենքեր	Մեքենաներ և սարքավոր- ումներ	Փոխադրա- միջոցներ	Տնտեսական գույք	Անավարտ շինարարու- թյուն	Ընդամենը
Երակետային արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	16,547,853	11,187,862	280,150	37,499	7,126	28,060,490
Ավելացումներ	-	4,736	-	26,863	214,023	245,622
Օտարումներ	-	(141)	-	(87)	-	(228)
Տեղափոխումներ	-	23,319	-	-	(23,319)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	16,547,853	11,215,776	280,150	64,275	197,830	28,305,884
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	16,547,853	11,215,776	280,150	64,275	197,830	28,305,884
Ավելացումներ	-	489,490	168,502	10,693	394,549	1,063,234
Օտարումներ	95,970	214,136	-	-	(310,106)	-
Կուտակված մաշվածության բացառում	(979,849)	(1,935,100)	(263,563)	(45,825)	-	(3,224,337)
Վերագնահատում	814,356	1,523,955	176,095	(18,118)	-	2,496,288
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	16,478,330	11,508,257	361,184	11,025	282,273	28,641,069
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	(76,386)	(119,658)	(48,368)	(12,479)	-	(256,891)
Տարվա մաշվածություն	(452,187)	(1,022,743)	(207,404)	(24,291)	-	(1,706,625)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	(528,573)	(1,142,401)	(255,772)	(36,770)	-	(1,963,516)
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	(528,573)	(1,142,401)	(255,772)	(36,770)	-	(1,963,516)
Տարվա մաշվածություն	(451,276)	(792,699)	(7,791)	(9,055)	-	(1,260,821)
Կուտակված մաշվածության բացառում	979,849	1,935,100	263,563	45,825	-	3,224,337
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	-	-	-	-	-	-
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2019թ.	16,471,467	11,068,204	231,782	25,020	7,126	27,803,599
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	16,019,280	10,073,375	24,378	27,505	197,830	26,342,368
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	16,478,330	11,508,257	361,184	11,025	282,273	28,641,069
Հաշվեկշռային արժեքը, եթե վերագնահատում չիրականացվեր						
Առ 1 հունվարի 2019թ.	4,209,884	19,066,382	142,786	80,512	5,354	23,504,918
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	3,399,863	17,679,736	125,768	38,523	197,830	21,441,720
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	2,589,842	16,289,624	108,750	-	282,273	19,270,490

(ա) Վերագնահատում

Ղեկավարությունը հանձնարարել է «Էյ Էնդ Էմ Ֆայնենշլ Քոնսայթինգ» ՓԲԸ-ին իրականացնել հիմնական միջոցների անկախ գնահատում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Գնահատման արդյունքներով հիմնական միջոցների մաշեցված փոխարինման արժեքը կազմել է 28,641,069 հազար դրամ, որը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդով օգտագործված ելակետային տվյալները (տես Ծանոթագրություն 4):

Ընկերության հիմնական միջոցների մեծամասնությունը մասնագիտացված բնույթ ունի և հազվադեպ է վաճառվում բաց շուկայում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի հանդիսանում բիզնեսի շարունակելիության մաս: Բացառությամբ փոխադրամիջոցների և որոշ հողատարածքների և շենքերի, որոնք վերագնահատվել են վերջերս շուկայում տեղի ունեցած գործառնությունների տվյալների կամ դիտարկվող շուկայական ելակետային տվյալների (օրինակ՝ համադրելի ապրանքների շուկայական գները) հիման վրա, նմանատիպ հիմնական միջոցների շուկան ակտիվ չէ Հայաստանի Հանրապետությունում և չի ապահովում համադրելի հիմնական միջոցների վաճառքի բավարար ծավալ՝ իրական արժեքը գնահատելիս շուկայական մոտեցումն օգտագործելու համար:

Հետևաբար, հիմնական միջոցների իրական արժեքը որոշվել էր օգտագործելով գեղջված դրամական հոսքերի մոտեցումը: Այս մեթոդը հաշվի է առնում Ընկերության ազատ դրամական հոսքերը ձեռնարկության արժեքը գնահատելու և պահանջվող ճշգրտումները կատարելու համար (այսինքն՝ զուտ շրջանառու կապիտալի և այլ գործառնական երկարաժամկետ ակտիվների հաշվեկշռային արժեքը), որպեսզի դուրս բերվի հիմնական միջոցների արժեքը:

Դրամական հոսքերի ստուգման ընթացքում կիրառվել են հետևյալ առանցքային ենթադրությունները.

- Դրամական հոսքերի կանխատեսումներն իրականացվել են նախկին փորձի, գործառնական գործունեության փաստացի արդյունքների և Ընկերության քսանչորսամյա գործարար ծրագրի հիման վրա: Գործարար ծրագրի ժամկետը որոշվել է հիմք ընդունելով ՀԾԿՀ-ի կողմից հրապարակված սակագների ձևավորման մեթոդաբանությունը՝ համաձայն որի Ընկերության կողմից կատարած ներդրումները կհատուցվեն միջինը 25 տարում:
- Դրամական հոսքերի կանխատեսումներում ներառված վաճառքի ակնկալվող ծավալները գնահատվել են ՀԾԿՀ կողմից հրապարակված սակագների ձևավորման մեթոդաբանության համաձայն:
- Հասույթը և ծախսերը ճշգրտվել են գնանի համապատասխան դրույքներով
- Կիրառվել է գեղջման դրույք 10.57%-ի չափով: Չեղջման դրույքը որոշվել է հիմք ընդունելով տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը, որը հիմնված է պարտքի օգտագործման 39.05% հնարավոր միջակայքի վրա՝ 8% շուկայական տոկոսադրույքով:
- Վերջնական արժեքը որոշվել է քսանչորսամյա ժամանակաշրջանի ավարտի դրությամբ: Հիմնական միջոցների վերջնական արժեքը որոշելիս կիրառվել է վերջնական դրույք 0%-ի չափով:

Այագա դրամական հոսքերի գնահատված գեղջված գումարը բարձր է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքից մոտավորապես 2,521,958 հազար դրամով: Վերը նշված գնահատումները հատկապես զգայուն են հետևյալ ոլորտում.

- Եթե գեղջման դրույքն ավելանա 1%-ով, ապա այագա դրամական հոսքերի գնահատված գեղջված գումարը կկազմի 27,628,779 հազար դրամ:

12. Պաշարներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Պահեստամասեր	298,672	292,933
Նյութեր	84,810	66,882
Այլ	79,717	34,035
	463,199	393,850

13. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Առևտրական դեբիտորական պարտքեր	613,248	553,446
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(10,431)	(10,349)
	602,817	543,097
Տրված կանխավճարներ	43,786	42,770
Ստացվելիք այլ հարկեր	160,700	82,671
Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	807,303	668,538

Արժույթային և պարտքային ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում:

14. Բանկային ավանդներ

Ստորև ներկայացված են բանկային ավանդների համար գործող պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանակ. տոկոսադր.	Մարման տարի	31 դեկտեմբերի 2020թ.		31 դեկտեմբերի 2019թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Բանկային ավանդ	<< դրամ	6.75%	2021	151,660	151,660	-	-
Բանկային ավանդ	<< դրամ	7.0%	2020	-	-	334,050	334,050
				151,660	151,660	334,050	334,050

15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ընթացիկ հաշիվներ	314,429	167,478
Կանխիկը դրամարկղում	-	27
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական հոսքերի մասին հաշվետվությունում	314,429	167,505

Արժույթային և պարտքային ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում:

16. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջովին վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 585,650 սովորական բաժնետոմսից՝ 1,000 դրամ անվանական արժեքով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 585,650 բաժնետոմս՝ 1,000 դրամ անվանական արժեքով):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Վերագնահատումից արժեքի աճ

Վերագնահատումից արժեքի աճը վերաբերում է հիմնական միջոցների վերագնահատմանը:

(գ) Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի մշտական մոնիտորինգի, ինչպես նաև հիմնականում գործառնական գործունեությունից ստացվող դրամական հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

17. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Ընկերության տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ:

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված վարկ ՀՀ կառավարությունից	2,017,786	1,722,459
Գրավով ապահովված վարկ ՎՉԵԲ-ից	-	8,175,580
Գրավով ապահովված վարկ ԱԶԲ-ից	-	8,167,979
	2,017,786	18,066,018
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված վարկ «Էյջ-Էս-Բի-Մի»-ից	21,963,796	-
Գրավով չապահովված փոխառություն բաժնետիրոջից	675,768	-
Գրավով չապահովված վարկ ՀՀ կառավարությունից	456,603	384,577
Գրավով ապահովված վարկ ՎՉԵԲ-ից	-	1,422,500
Գրավով ապահովված վարկ ԱԶԲ-ից	-	1,421,125
Գրավով չապահովված վարկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ից	-	938,171
	23,096,167	4,166,373
Ընդամենը վարկեր և փոխառություններ	25,113,953	22,232,391

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը խախտել է վարկային պայմանագրի ֆինանսական կովենանտը, ինչը իրավունք է տալիս վարկառուին պահանջել 21,963,796 հազար դրամ գումարով չմարված ընդհանուր մնացորդի վաղաժամ մարում:

Այնուամենայնիվ, հաշվետու ամսաթվից հետո Ընկերությանը ուղարկված գրությունում բանկը մտադրություն է հայտնել չօգտվել վերոնշյալ իրավունքից: Ավելին, տարեվերջից հետո տրամադրվել է նոր վարկ՝ 3,000 հազար ԱՄՆ դոլարի չափով:

Այնուահանդերձ, վարկի ընդհանուր մնացորդը դասակարգվել է որպես ընթացիկ, ինչպես պահանջվում է ՀՀՄՍ 1-ի 74-րդ պարագրաֆով:

Այսպիսով, ղեկավարությունը գտնում է, որ վարկը կմարվի սկզբնական մարման ժամանակացույցի համաձայն, որը ներկայացված է Ծանոթագրություն 19 (բ) (iii) կետում:

(ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների համար գործող պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանակ. տոկոսադր.	Մարման տարի	31 դեկտեմբերի 2020թ.		31 դեկտեմբերի 2019թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով ապահովված վարկ «Էյ-Էս-Բի-Մի»-ից	Եվրո	3.0%	2025	21,949,336	21,963,796	-	-
Գրավով չապահովված վարկ ՀՀ կառավարությունից	Եվրո	0.75%	2020-2041	7,315,594	2,474,389	6,467,034	2,107,036
Գրավով չապահովված փոխառություն բաժնետիրոջից	ՀՀ դրամ	0.0%	2021	750,000	675,768	-	-
Գրավով ապահովված վարկ ՎՉԵԲ-ից	ԱՄՆ դոլար	6.13%	2020-2027	-	-	9,669,128	9,598,080
Գրավով ապահովված վարկ ԱՉԲ-ից	ԱՄՆ դոլար	6.13%	2020-2027	-	-	9,669,081	9,589,104
Գրավով չապահովված վարկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ից	ԱՄՆ դոլար	12.1%	2020	-	-	68,294	68,294
Գրավով չապահովված վարկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ից	ԱՄՆ դոլար	8.75%	2020	-	-	869,877	869,877
Ընդամենը վարկեր և փոխառություններ				30,014,929	25,113,953	26,743,414	22,232,391

(բ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

հազ. դրամ	Պարտավորություններ Վարկեր և փոխառություններ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	22,232,391	22,232,391
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր փոխառություններից	20,578,669	20,578,669
Փոխառությունների մարում	(21,927,271)	(21,927,271)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	20,883,789	20,883,789
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	4,174,015	4,174,015
Այլ փոփոխություններ		
<i>Պարտավորությունների հետ կապված</i>		
Տոկոսային ծախս	1,415,122	1,415,122
Վճարված տոկոսներ	(1,284,354)	(1,284,354)
Այլ փոփոխություններ	(74,619)	(74,619)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	56,149	56,149
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	25,113,953	25,113,953

հազ. դրամ	Պարտավորություններ Վարկեր և փոխառություններ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	23,538,854	23,538,854
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր փոխառություններից	879,426	879,426
Փոխառությունների մարում	(2,215,969)	(2,215,969)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	(1,336,543)	(1,336,543)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	(249,395)	(249,395)
Այլ փոփոխություններ		
<i>Պարտավորությունների հետ կապված</i>		
Տոկոսային ծախս	1,656,805	1,656,805
Վճարված տոկոսներ	(1,377,330)	(1,377,330)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	279,475	279,475
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	22,232,391	22,232,391

18. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցների ձեռքբերման գծով	1,605,462	1,031,801
Վճարվելիք հարկեր	72,630	111,804
Առևտրական կրեդիտորական պարտքեր	274,327	88,227
Աշխատավարձ	3,899	57,743
Արձակուրդային վճարների գծով պահուստ	77,853	75,078
Այլ	1,552	9,880
Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,035,723	1,374,533

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժույթային և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 19-ում:

19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացվելիք գումարների հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի բնութագրերից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության հաճախորդների բազայի պարտքային ռիսկի վրա, այդ թվում՝ այն ոլորտին և երկրին բնորոշ պարտագանցման ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները:

Առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Ընկերությունը բոլոր հաճախորդների համար վճարման առավելագույն ժամկետ է սահմանել մեկ ամիսը:

Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ընկերության հաճախորդներից ոչ մեկը չունի արտաքին վարկանիշ: Բոլոր մնացորդները վերագրելի են իրավաբանական անձանց հետ գործարքներին, և Ընկերությունը գտնում է, որ իր բոլոր հաճախորդներին բնորոշ է ցածր պարտքային ռիսկ: Ընկերության ոչ մի հաճախորդի հետ կապված պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում հաճախորդների համար

Ընկերությունը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ այն տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորուստի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշներ, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ, կառավարչական հաշվետվություններ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում հրապարակված տեղեկատվություն), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտագանցման ռիսկի մասին և համընկնում են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանշավորման սահմանումներին ինչպիսին «Moody’s Investor Services»-ն է:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության և առևտրական դեբիտորական պարտքերի և հաճախորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2020թ.	Կորուստի միջին կշռված մակարդակ	Համախառնա հաշվեկշռային արժեք	Արժեզրկումից կորուստների գծով պահուստ	Պարտքային առումով արժեզրկված
հազ. դրամ				
Առևտրական դեբիտորական պարտքեր և պայմանագրի գծով ակտիվներ				
Ցածր ռիսկ	0.14%	603,511	(835)	Ոչ
Պարտագանցում	100%	9,596	(9,596)	Այո
		613,107	(10,431)	

Ընկերությունը ցածր ռիսկը սահմանում է հետևյալ կերպ.

Ցածր ռիսկ. հաճախորդը մոտ ապագայում ունի պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու կայուն հնարավորություն, իսկ ավելի երկար ժամկետում տնտեսական և առևտրային պայմանների անբարենպաստ փոփոխությունները քիչ հավանական է, որ նվազեցնեն պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու փոխառուի կարողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության և առևտրական դեբիտորական պարտքերի և հաճախորդների հետ պայմանագրերի գծով ակտիվների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2019թ.	Կորստի միջին կշռված մակարդակ	Համախառնա հաշվեկշռային արժեք	Արժեզրկումից կորուստների գծով պահուստ	Պարտքային առումով արժեզրկված
հազ. դրամ				
Առևտրական դեբիտորական պարտքեր և պայմանագրի գծով ակտիվներ				
Ցածր ռիսկ	0.14%	543,850	(753)	Ոչ
Պարտագանցում	100%	9,596	(9,596)	Այո
		553,446	(10,349)	

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների արժեզրկման գծով պահուստի փոփոխություններ

Ստորև ներկայացված են առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները տարվա ընթացքում:

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Մնացորդը առ 1 հունվարի	(10,349)	(10,363)
Կորստի պահուստի գուտ վերաչափում	(82)	14
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(10,431)	(10,349)

Դրամական միջոցներ և դրանց փոխարժեքներ և բանկային ավանդներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 466,089 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 501,528 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Բանկային հաշիվների մնացորդները պահվում են իր ընդհանուր ակտիվներով տաս խոշոր հայկական բանկերից մեկը հանդիսացող բանկում, և Ընկերությունը չի ակնկալում, որ բանկը չի կատարի իր պարտականությունները:

Ընկերության գնահատմամբ ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետ բնույթի պատճառով:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգելու:

Եներգարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Աղյուսակներում ներկայացված են համախառն և չգեղջված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսների վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

31 դեկտեմբերի 2020թ.

հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր	Ցպահանջ և մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Գրավով ապահովված բանկային վարկեր*	21,963,796	24,159,860	-	3,013,960	2,217,030	18,928,870	-
Գրավով չապահովված վարկեր	2,474,389	7,826,393	-	456,603	453,584	1,342,637	5,573,569
Գրավով չապահովված փոխառություն բաժնետիրոջից	675,768	750,000	-	750,000	-	-	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	1,885,240	1,885,240	1,885,240	-	-	-	-
	26,999,193	34,621,493	1,885,240	4,220,563	2,670,614	20,271,507	5,573,569

31 դեկտեմբերի 2019թ.

հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր	Ցպահանջ և մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Գրավով ապահովված բանկային վարկեր	19,187,184	23,862,369	-	2,914,961	2,929,603	8,907,597	9,110,208
Գրավով չապահովված վարկեր	3,045,207	7,896,404	32,790	1,304,976	382,640	1,132,741	5,043,257
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	1,187,752	1,187,752	1,187,752	-	-	-	-
	23,420,143	32,946,525	1,220,542	4,219,937	3,312,243	10,040,338	14,153,465

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:

* Գրավով ապահովված բանկային վարկի դրամական հոսքերը ներկայացված են սկզբնական պայմանագրային ժամանակացույցի հիման վրա, այնուամենայնիվ, Ընկերությունը խախտել է բանկի հետ կնքված վարկային պայմանագրի ֆինանսական կովենանտները, ինչը վարկատուին իրավունք է տվել պահանջել վարկի վաղաժամ մարում: Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 17-ում:

(iv) Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկն Ընկերության եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Ծուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Աժութային ռիսկ

Արժութային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը կապված է ՀՀ դրամից տարբեր արժույթով արտահայտված առևտրական կրեդիտորական պարտքերի և վարկերի և փոխառությունների հետ: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Ենթարկվածությունն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է Ընկերության ենթարկվածությունն արժութային ռիսկին:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված	Եվրոյով արտահայտված	ԱՄՆ դոլարով արտահայտված	Եվրոյով արտահայտված
	2020թ.	2020թ.	2019թ.	2019թ.
Առևտրական կրեդիտորական պարտքեր	(1,124,054)	-	(1,031,801)	-
Վարկեր և փոխառություններ	-	(24,438,185)	(20,125,355)	(2,107,036)
Համախառն ենթարկվածություն	(1,124,054)	(24,438,185)	(21,157,156)	(2,107,036)

Տարվա ընթացքում կիրառվել արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
1 ԱՄՆ դոլար	489.23	480.41	522.59	479.7
1 եվրո	559.08	537.94	641.11	537.26

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված ղեկավարների 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և շահույթի կամ վնասի (առանց հարկերի) վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	Աճ	Նվազում
	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2020թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	112,405	(112,405)
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ	2,444,190	(2,444,190)
31 դեկտեմբերի 2019թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	1,692,572	(1,692,572)
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ	168,563	(168,563)

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Դեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում դեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ ֆիքսված թե փոփոխուն, ավելի բարենպաստ կլինի Ընկերության համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2020թ.	2019թ.
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	3,150,157	2,976,913
	3,150,157	2,976,913
Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	21,963,796	19,255,478
	21,963,796	19,255,478

Իրական արժեքի զգայնության վերլուծություն ֆիքսված դրույքով գործիքների համար

Ընկերությունը չի հաշվառում ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի: Ուստի, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Դրամական միջոցների զգայնության վերլուծություն փոփոխուն տոկոսադրույքով գործիքների համար

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունը 100 բազիսային կետով կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը (առանց հարկերի) ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

	Հաշվեկշռային արժեք	
	100 բկ աճ	100 բկ նվազում
2020թ.		
Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ	(180,134)	180,134
Դրամական հոսքերի զգայնություն (զուտ)	(180,134)	180,134
2019թ.		
Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ	(154,044)	154,044
Դրամական հոսքերի զգայնություն (զուտ)	(154,044)	(154,044)

20. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունն ամբողջովին չի ապահովագրել իր ակտիվները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Ընկերությունը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

21. Կապակցված կողմեր

(ա) Վերահսկողություն

Ընկերության միակ բաժնետերը «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ-ն է: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն է, իսկ վերջնական վերահսկող անձն է պրն. Մամվել Կարապետյանը:

Ընկերության մայր կազմակերպությունը հրապարակում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

(բ) Գործարքներ առնացրային կառավարչական անձնակազմի հետ

Տարվա ընթացքում առնացրային կառավարչական անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	185,454	98,044

(գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	613,837	-	(147,569)	(1,031,801)
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում				
Բաժնետեր	1,520	-	-	-
Հասույթ				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ և բաժնետերերի հետ կապակցված կազմակերպություններ	5,482,462	-	603,408	-
Ղեկավարության տրված կանխավճարներ				
Այլ (նախքին առանցքային կառավարչական անձնակազմ)	-	-	-	38,075

22. Զափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

23. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար: 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ են գործող ստանդարտների մի շարք փոփոխություններ, որոնք սակայն նշանակալի ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(ա) Հասույթ

Հանախորդների հետ պայմանագրերին վերաբերող Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ի (գ) կետում:

(բ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ կորուստը:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը գեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը դադարում է պարտքային առումով արժեզրկված լինելուց, հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հիմունքով:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում են կատարվում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները՝ զուտ շահույթի, թե՛ զուտ վնասի:

(գ) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(դ) Աշխատակիցների հատուցումներ

Կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(ե) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունը տվյալ պահին ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրազործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ գուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

(գ) Հիմնական միջոցներ

(i) Ծանաչում և չափում

Հիմնական միջոցները ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հիմնական միջոցների իրական արժեքների փոփոխություններից: Եթե հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն հիմնական միջոցի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն հիմնական միջոցի ուղղակիորեն սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը գույքընթաց:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Հոդատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների նշանակալի մասերի օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- շենքեր 10-50 տարի
- մեքենաներ և սարքավորումներ 10-50 տարի
- տնտեսական գույք 3-10 տարի
- այլ 1-5 տարի

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(Է) Ֆինանսական գործիքներ

(i) Ծանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորդված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորդել ֆինանսական ակտիվը, որն այսպես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել որոշակի տոկոսային եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորվում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Ընկերությունը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- պայմանները, որոնք կարող են ճշգրտել պայմանագրային արժեկտրոնային դրույքը, այդ թվում՝ փոփոխական տոկոսադրույքի պայմանները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի նկատմամբ զեղչով կամ հավելագնով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարով, որն ըստ էության իրենից ներկայացնում է պայմանագրային անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսը (որը կարող է ներառել լրացուցիչ ողջամիտ փոխհատուցումը պայմանագրի վաղաժամ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման հատկանիշի իրական արժեքն աննշան է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ընկերությունն իր ֆինանսական ակտիվները դասում է ամորտիզացված արժեքով չափվող գործիքների դասին: Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախորոշված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Ծախույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով գուտ օգուտը և կորուստները, ներառյալ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) **Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում**

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Ընկերությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք գեշվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Ընկերությունը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Ընկերությունը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկված հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները գուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

(iv) **Ապահանջում**

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն ապահանջում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ընկերությունն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապահանջվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապահանջում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Ընկերությունը նաև ապահանջում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապահանջման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) **Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(ը) **Բաժնետիրական կապիտալ**

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(թ) **Արժեզրկում**

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով: Երբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, Ընկերության անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Ընկերությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ հաճախորդն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Ընկերության նկատմամբ, եթե Ընկերությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների գումարն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մի մասն է, որն իրենից ներկայացնում է այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե գործիքի ակնկալվող ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում կազմակերպությունը ենթարկված է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացում են պարտքային կորուստների հավանականությամբ կշռված պարտքային կորուստների գնահատականը: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը):

Ակնկալվող պարտքային կորուստները գեղջվում են ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտագանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունը այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Ֆիզիկական անձ հանդիսացող հանախորդների համար Ընկերությունը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքը դուրս գրելու քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան 180 օր ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գումարների փոխհատուցման նանցյալ ժամանակաշրջանների փորձը: Իրավաբանական անձ հանդիսացող հանախորդների համար Ընկերությունն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում էլնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Ընկերությունը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(ժ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը գեղջման միջև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեռքի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(h) Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Ընկերությունը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՄ 16-ի վարձակալության սահմանումը:

(i) Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությունը Ընկերությանը չի փոխանցում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում է, որ Ընկերությունը կիրառործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում է հիմնական միջոցների համար:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ գեղջված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Ընկերությունը որպես գեղջման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Ընկերությունը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրառործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրառործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Ընկերությունը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Ընկերության գնահատականի փոփոխություն, եթե Ընկերությունը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորություններն Ընկերությունը ներկայացնում է առանձին՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ընկերությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Ընկերությունը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, օրինակ՝ չեն արտացոլում շուկայական դրույքների փոփոխությունները, չպետք է ներառվեն վարձակալության գծով պարտավորության չափման մեջ: Մուլտիցիպալ կամ դաշնային հողատարածքների վարձակալությունների հետ կապված, որոնց դեպքում վարձավճարները հիմնված են հողատարածքի կադաստրային արժեքի վրա և չեն փոխվում մինչև այդ արժեքի կամ կիրառելի դրույքների (կամ այդ երկուսի) հաջորդ վերանայումն իրավասու մարմնիների կողմից, Ընկերությունը որոշել է, որ ներկայումս կիրառվող վերանայման մեխանիզմի համաձայն վարձակալվող հողատարածքների վարձավճարները չեն կարող դիտարկվել ոչ որպես փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, ոչ էլ որպես ըստ էության հաստատուն վարձավճարներ, և այդ իսկ պատճառով, ներառված չեն վարձակալության գծով պարտավորության չափման մեջ:

(ii) Ընկերությունը՝ որպես վարձատու

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում Ընկերությունը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձատու, ապա այն վարձակալության սկզբում որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական թե գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Ընկերությունն ընդհանուր գնահատում է, թե արդյոք վարձակալությունով փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս՝ Ընկերությունը դիտարկում է որոշ հայտանիշներ, օրինակ՝ թե արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

Գործառնական վարձակալության գծով ստացված վարձավճարներն Ընկերությունը ճանաչում է որպես եկամուտ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես «այլ հասույթի» մաս:

Երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձատու, ապա այն վարձակալության սկզբում որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական թե գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Ընկերությունն ընդհանուր գնահատում է, թե արդյոք վարձակալությունով փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս՝ Ընկերությունը դիտարկում է որոշ հայտանիշներ, օրինակ՝ թե արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

24. Գեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2020թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները: Չի ակնկալվում, որ ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները նշանակալի ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(ա) Անբարենպաստ պայմանագրեր. Գայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՄ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Ընկերությունը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար:

(բ) Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում. Փուլ 2 (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

Փոփոխություններն անդրադառնում են այն հարցերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում, ներառյալ փոփոխությունների ազդեցությունը պայմանագրային դրամական հոսքերի կամ հեջավորման հարաբերությունների վրա՝ ուղենիշային տոկոսադրույքն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով փոխարինելու դեպքում: Փոփոխությունները նախատեսում են ազատում ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 որոշակի պահանջներից, որոնք վերաբերում են.

- ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություններին և
- հեջի հաշվառմանը:

(i) Դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն

Փոփոխությունները Ընկերությունից կպահանջեն հաշվառել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունը՝ թարմացնելով ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման հետ կապված:

(ii) Հեջի հաշվառում

Փոփոխությունները նախատեսում են բացառություններ հեջի հաշվառման պահանջների հետ կապված հետևյալ ոլորտներում.

- Թույլ տալ փոփոխություն հեջավորման հարաբերության նախորդման հետ կապված բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար:
- Բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար դրամական հոսքերի հեջում հեջավորված հողվածի գծով փոփոխություն կատարելիս՝ դրամական հոսքերի հեջի պահուստում կուտակված գումարը կդիտարկվի որպես հիմնված այն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքի վրա, որով որոշվում են հեջավորված ապագա դրամական հոսքերը:
- Երբ հողվածների խումբը նախորդվում է որպես հեջավորված հողված, և խմբի հողվածի հետ կապված կատարվում է փոփոխություն բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար, հեջավորված հողվածները բաշխվում են ենթախմբերի հեջավորվող ուղենիշային տոկոսադրույքների հիման վրա:
- Եթե Ընկերությունը ողջամտորեն ակնկալում է, որ այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքն առանձին նույնականացվող է 24 ամսվա ընթացքում, ապա չի արգելվում տոկոսադրույքը նախորդել որպես պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչ, եթե այն առանձին նույնականացվող չէ նախորդման ամսաթվի դրությամբ:

(iii) Բացահայտում

Փոփոխություններն Ընկերությունից կպահանջեն բացահայտել լրացուցիչ տեղեկատվություն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում առաջացող ռիսկերին Ընկերության ենթարկվածության և ռիսկերի կառավարման համար իրականացվող համապատասխան գործունեության վերաբերյալ:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ